«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

BDO

« Բի-Դի-Օ Արմենիա » ՓԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

3	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն
4	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
5	Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
6	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
7	Համախմբված ֆնանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
8	Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Տնօրեն՝	Վահագն Սահակյան

«Բի-Դի-Օ Արմենիա » ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Հասույթ		1,029,011	860,984
Վաճառքի ինքնարժեք	5	(682,312)	(554,199)
Համախառն շահույթ		346,699	306,785
Գործառնական այլ եկամուտներ		4,133	1,926
Վարչական ծախսեր	5	(240,180)	(211,614)
Իրացման ծախսեր	5	(8,061)	(7,198)
Այլ ծախսեր	5	(27,971)	(7,007)
Գործառնական շահույթ (վնաս)		74,620	82,892
Ֆինանսական եկամուտ		2,222	1,413
Ֆինանսական ծախս		(9,365)	(4,901)
Շահույթ հարկումից առաջ		67,477	79,404
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)		(17,545)	(19,788)
Զուտ շահույթ		49,932	59,616
Ընդամենը համապարփակ եկամուտ		49,932	59,616

Վահագն Սահակյան
Տնօրեն

Օլգա Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ

«Բի-Դի-Օ Արմենիա » ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	31 դեկտեմբեր 2022 հազար դրամ	31 դեկտեմբեր 2021 հազար դրամ
ԱԿՏԻՎ			
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	**182,645**	155,139
Պաշարներ		**29,189**	4,390
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		**108,953**	98,437
		320,787	257,966
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		**30,981**	27,478
Գուդվիլ		**55,402**	55,402
Հետաձգված ծախս		**36,998**	36,998
Ակտիվի օգտագործման իրավունք		**56,322**	90,116
Հետաձգված հարկային ակտիվներ		**29,893**	20,378
		201,946	230,372
		522,733	488,338
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7	**120,339**	66,346
Պահուստ		**90,293**	114,227
		210,632	180,573
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	8	**58,460**	89,100
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		**248,458**	285,442
		306,918	374,542
Ընդամենը պարտավորություններ		**517,550**	555,115
Զուտ ակտիվներ		**5,183**	(66,777)
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	9	**8,418**	7,778
Էմիսիոն եկամուտ		**21,388**	-
Պահուստային կապիտալ		**6,262**	6,167
Սեփական կապիտալի հոդվածներ		**(38,635)**	(38,635)
Կուտակված շահույթ		**7,750**	(42,087)
		5,183	(66,777)

«Բի-Դի-Օ Արմենիա » ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	**1,305,117**	1,025,937
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	**(311,525)**	(244,960)
Աշխատավարձ, եկամտահարկ և սոցվճար	**(581,307)**	(415,851)
Վճարված շահութահարկ (վճարումներ բյուջե)	**(22,257)**	(23,243)
Այլ հարկերի և տուրքերի վճարումներ	**(333,115)**	(243,634)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	**(8,709)**	(7,056)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**48,204**	105,701
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	**(12,078)**	(12,969)
Փոխառության տրամադրում	**(22,531)**	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(34,609)**	(12,969)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	-	(29,827)
Բաժնետոմսերի ետ գնում	**(14,453)**	-
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(14,453)**	(29,827)
Դրամական միջոցների վերագնահատումից զուտ օգուտ/(վնաս)	**11,374**	(4,127)
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	**10,516**	58,778
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ	**98,437**	64,498
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ	**108,953**	98,437

«Բի-Դի-Օ Արմենիա » ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Չբաշխված շահույթ	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2021թ	**7,778**	**-**	**6,167**	**(38,635)**	**(42,087)**	**(66,777)**
Տարվա համապարփակ եկամուտ						
Շահույթ					49,932	49,932
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**-**	**-**	**-**	**-**	**49,932**	**49,932**
Բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից						
Շահաբաժիններ						
Վերադասակարգում			96		(96)	-
Բաժնետոմսերի թողարկում	640	21,388				22,028
Ընդամենը՝ բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից	640	21,388	96	-	(96)	22,028
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2021թ.	**8,418**	**21,388**	**6,263**	**(38,635)**	**7,749**	**5,183**
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2020թ	7,000	16,395	6,050	-	64,934	94,379
Ճշգրտումներ		(16,395)		(38,635)	(134,640)	(189,670)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2020թ	7,000	-	6,050	(38,635)	(69,706)	(95,291)
Տարվա համապարփակ եկամուտ						
Շահույթ					59,616	59,616
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	-	-	59,616	59,616
Բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից						
Շահաբաժիններ					(31,880)	(31,880)
Վերադասակարգում			117		(117)	-
Բաժնետոմսերի թողարկում	778					778
Ընդամենը՝ բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից	778	-	117	-	(31,997)	(31,102)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2021թ	7,778	-	6,167	(38,635)	(42,087)	(66,777)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն 3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 6
1. Ընկերության վերաբերյալ 8
2. Պատրաստման հիմունքներ 9
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 9
4. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում 9
5. Ծախսերն ըստ բնույթի 13
6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 14
7. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 14
8. Ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալության գծով պարտավորություն 15
9. Կանոնադրական կապիտալ և ընդամենը սեփական կապիտալ 15
10. Պահուստային կապիտալ 15
11. Կապակցված կողմերի բացահայտումներ 15
12. Պայմանական պարտավորություններ 16
13. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ 16
14. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 16

1. Ընկերության վերաբերյալ

«Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 21.01.2010թ.-ին, գրանցման համար՝ 273.120.05398, վկայական՝ 03 Ա 086921: Ընկերությանը միացել է «Ամերիա Աուդիտ» ՓԲԸ, և միացումը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 19.11.2012թ.-ին:

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Ընկերությունը գրանցված է Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ Հաշվապահների պալատ ՀԿ ռեեստրում, Հիմնական գրանցման գրառման համար (ՀԳԳՀ)՝ 1 20 0267: Ընկերությունը մատուցում է աուդիտորական և աուդիտին հարակից ծառայություններ, հաշվապահական և խորհրդատվական ծառայություններ:

Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0069, Դ. Անհաղթի փող. 23/6, 5-րդ հարկ, սենյակ 7:

11.01.2018թ.-ին “ՍՈՍ-Աուդիտ” ՍՊԸ միացել է Ընկերությանը:

19.04.2018թ.-ին Ընկերությունը հիմնադրել է «Բի-Դի-Օ Ըդվայզորի» ՓԲԸ:

03.09.2018թ.-ին Ընկերության կողմից թողարկվել են լրացուցիչ բաժնետոմսեր, որոնք ձեռք են բերվել “Պարադիգմա Արմենիա” ՓԲԸ բաժնետերերի կողմից և ձեռքբերման դիմաց Ընկերությանը փոխանցվել է “Պարադիգմա Արմենիա” ՓԲԸ կանոնադրական կապիտալի 100 տոկոս մասնակցությունը:

Արդյունքում “Պարադիգմա Արմենիա” ՓԲԸ (գրանցված է ՀՀ-ում) հանդիսանում է «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ դուստր ընկերություն 100% մասնակցությամբ և հետագայում վերանվանվել է «Բի-Դի-Օ Ըքաունթինք, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ:

10.12.2020թ.-ին “Էյ-ԷՆդ ԷՄ Ֆայնեշնլ Քոնսալթինգ” ՓԲԸ-ն միացել է «Բի-Դի-Օ Ըդվայզորի» ՓԲԸ:

<u>Դուստր կազմակերպություններ</u>

Ստորև ներկայացված են դուստր կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Անվանում	Մայր կազմակերպության գտնվելու վայրը և գործունեության հիմնական վայրը	Սեփականության բաժնեմասեր դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		2022թ.	2021թ.
«Բի-Դի-Օ Ըդվայզորի» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%
« Բի-Դի-Օ Ըքաունթինք, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 15-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Գործառնական դեբիտորական պարտքեր - առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիության գծով (տե՛ս Ծանոթագրություն 4 -Պարտքային ռիսկ):

Մաշվածություն և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ - օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել:

4. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերի՝

- *Պարտքային ռիսկ*
- *Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,*

- *Արտարժութային ռիսկ*
- *Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Կրեդիտորական պարտքեր
- Վարձակալության գծով պարտավորություններ
- Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, դեբիտորական պարտքեր, կրեդիտորական պարտքեր, տրված փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, դեբիտորական պարտքերի, կրեդիտորական պարտքերի, տրված փոխառությունները հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապառիկ վաճառքներից:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և ներդրած ավանդներից: Ընկերությունը ընդունելի է համարում միայն խոշորագույն բանկերը:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից: Ընկերությունը չունի փոփոխական տոկոսադրույքով փոխառություններ ուստի առկա չէ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ:

Արտարժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Ընկերության հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքների, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ:
Այլ արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ Կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև.

	USD հավասար է ՀՀ դրամ	EUR հավասար է ՀՀ դրամ
ՀՀ ԿԲ դրույք 31.12.22	393.57	420.06
ՀՀ ԿԲ դրույք 31.12.21	480.14	542.61

Առ 31-ը դեկտեմբերի, Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկերին ներկայացված է ստորև.

Արտարժույթով արտահայտված զուտ ֆինանսական ակտիվներ/(պարտավորություններ)	**31.12.2022** **հազար դրամ**	**31.12.2021** **հազար դրամ**
Եվրո	**4,883**	13,123
ԱՄՆ դոլար	**73,409**	95,363
Ընդամենը զուտ պարտավորություն	**78,292**	108,486

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված զուտ ակտիվների վրա (այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով) կհանգեցնի տարվա հարկումից առաջ շահույթի և զուտ ակտիվների աճին՝ 2.9 մլն. դրամի չափով (2021թ. ՝ 4.6 մլն. դրամ), իսկ 10% արժեզրկման դեպքում՝ տարվա հարկումից առաջ վնասի և զուտ ակտիվների նվազմանը՝ 2.6 մլն. դրամի չափով (2021թ.՝ 4.2 մլն. ՀՀ դրամ):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:
Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:
Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:
Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

5. Ծախսերն ըստ բնույթի

2022թ.	Ընդամենը	Ծառայության ինքնարժեք	Վարչական ծախսեր	Իրացման ծախսեր	Այլ ծախսեր
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Աշխատակիցների գծով ծախս	680,550	564,937	112,147	3,466	-
Գրասենյակի ծախսեր	19,493	-	19,493	-	-
Մաշվածություն և ամորտիզացիա	49,505	-	49,505	-	-
Այլ	208,975	117,374	59,035	4,595	27,971
	958,523	**682,311**	**240,180**	**8,061**	**27,971**

2021թ.	Ընդամենը	Ծառայության ինքնարժեք	Վարչական ծախսեր	Իրացման ծախսեր	Այլ ծախսեր
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Աշխատակիցների գծով ծախս	567,177	450,877	113,220	3,080	-
Գրասենյակի ծախսեր	49,564	-	49,564	-	-
Մաշվածություն և ամորտիզացիա	12,253	-	12,253	-	-
Այլ	151,024	103,322	36,577	4,118	7,007
	780,018	554,199	211,614	7,198	7,007

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2022թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	**132,459**	**114,401**
Դեբիտորական պարտքեր կապակցված կողմերի գծով	**2,829**	**23,488**
Ընդամենը որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասակարգված ֆինանսական ակտիվներ՝ բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների	**135,288**	137,889
Կանխավճարներ	**25,446**	**12,555**
Այլ դեբիտորական պարտքեր	**21,911**	**4,695**
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**182,645**	155,139

Որպես փոխառություն և դեբիտորական պարտք դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:
Կապակցված կողմերի հետ դեբիտորական պարտքերը բացահայտված են Ծանոթագրություն 11-ում:

7. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2022թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	**18,927**	20,069
Առևտրային կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերի գծով	**3,724**	5,670
Այլ կրեդիտորական պարտքեր	**3,880**	3,544
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների	**26,531**	29,283
Ստացված կանխավճարներ	**52,448**	15,620
Կրեդիտորական պարտքեր՝ հարկեր և սոցիալական վճարներ	**41,360**	21,443
Վարձակալության գծով պարտավորություն	**58,460**	89,100
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	**248,458**	285,442
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**427,257**	440,888

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

8. Ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալության գծով պարտավորություն

Ընկերությունը վարձակալում է գրասենյակային տարածք և մինչև 2021 թվականը վարձակալությունը դասակարգվում էր որպես գործառնական վարձակալություն, իսկ 2021 թվականից վարձակալությունը ճանաչվում է որպես օգտագործման իրավունքով ակտիվ:

Ակտիվների օգտագործման իրավունք

	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Մնացորդ առ 1-ը հունվարի	90,116	0
Ավելացում	0	104,196
Ամորտիզացիա	(33,794)	-14,080
Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի	**56,322**	**90,116**

Վարձակալության գծով պարտավորություն

	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Մնացորդ առ 1-ը հունվարի	89,100	0
Ավելացում	0	99,210
Ֆինանսական ծախս	9,247	4,901
Վճարումներ	(39,888)	(15,011)
Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի	**58,460**	**89,100**

9. Կանոնադրական կապիտալ և ընդամենը սեփական կապիտալ

	2022թ. հազար դրամ	**2021թ. հազար դրամ**
Կանոնադրական կապիտալ	**8,418**	7,778

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 8,418,000 (ութ միլիոն չորս հարյուր տասնութ հազար) դրամ, որը բաղկացած է 8,418 (ութ հազար չորս հարյուր տասնութ) հատ բաժնետոմսից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1’000 (մեկ հազար) ՀՀ դրամ: Բոլոր 8,418 հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են:

2022 թվականին չի հայտարարագրվել և չի վճարվել շահաբաժին (2021 թվականին հայտարարագրվել և վճարվել է 31,880 հազար դրամ շահաբաժին):

10. Պահուստային կապիտալ

Կանոնադրության համաձայն Ընկերությունը պետք է կանոնադրական կապիտալի 15%-ի չափով պահուստային կապիտալ ստեղծի: Պահուստային կապիտալը ստեղծվել է կուտակված շահույթից կատարված մասհանումների մասով:

11. Կապակցված կողմերի բացահայտումներ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում կապակցված կողմերի հետ:

(i) Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ Ընկերության տնօրենը, տնօրենի տեղակալները, ստորաբաժանման ղեկավարները: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

	2022թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ
Աշխատավարձ, այլ հատուցումներ	**219,008**	179,206

(ii) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

a) Գործարքներ ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ

Գործարքի տեսակը	2022թ. հազար դրամ	2021թ. հազար դրամ
Ծառայությունների գնում	**24,359**	4,105
Ծառայությունների վաճառք	**27,866**	31,317
Կանխավճարներ	**3,507**	27,212
Առևտրային դեբիտորական պարտքեր	**0**	576
Առևտրային կրեդիտորական պարտքեր	**2,829**	22,912

12. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

13. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ

2022թ. ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխություններ չեն եղել:

14. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ դրամը, որը հանդիսանում է նաև ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ողջ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով հազարների ճշտությամբ:

Համախմբում

Դուստր կազմակերպություններ համախմբվում են, եթե այն հսկվում են Մայր կազմակերպության կողմից: Եթե այլ հանգամանքներ առկա չեն, որոնք կվկայեն հակառակի մասին, ապա հսկողությունը համարվում է առկա, եթե Մայր կազմակերպությանն են պատկանում Դուստր կազմակերպության ձայների իրավունք տվող բաժնետոմսերի/բաժնեմասերի 50%-ից ավելին:

Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները: Դուստր կազմակերպությունը համախմբվում է հսկողության անցման պահից, մինչև հսկողությունը կորցնելու պահը:

Խմբում համախբվող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են կիրառելով հաշվապահական հաշվառման նույն քաղաքականությունը:

Բոլոր ներխմբային գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը համախմբված ֆինանսական հաշվտվություններում ամբողջովին բացառվում են:

Հասույթ

Ընկերության հասույթը հիմնականում առաջանում է աուդիտորական, հաշվապահական, հարկային, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայությունների մատուցումից:

Կատարողական պարտականություն
Պայմանագրի մեկնարկին կազմակերպությունը գնահատում է գնորդի հետ պայմանագրով խոստացված ծառայությունները, որպես կատարողական պարտականություն որոշակիացնելով գնորդին փոխանցվելիք յուրաքանչյուր խոստում, որը տարբերակալի է (օրինակ աուդիտորական ծառայություն), կամ տարբերակելի ծառայությունների շարք, որն ըստ էության նույն է և գնորդին փոխանցվում է նույն սխեմայով (օրինակ՝ ամենամսյա հաշվապահական ծառայություն):
Պայմանագրով սահմանված կատարողական պարտականությունների որոշակիացումը հիմնական հստակ է ու պարզ:

Գործարքի գնի որոշում
Ընկերության հասույթները ստացվում են հիմնականում ֆիքսված գների պայմանագրերից եւ, հետեւաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով:

Հասույթի ճանաչման պահը
Ընկերությունը հասույթը ճանաչում է կատարման պարտականության բավարմանը համապատասխան՝ խոստացված ծառայությունը փոխանցելով գնորդին:
Որոշակիացված յուրաքանչյուր պարտականության համար Ընկերությունը որոշում է, թե այդ պարտականությունը կատարվում է.

- ✓ Ժամանակի ընթացքում, թե
  - o :

Եթե պարտականության կատարման պարտականությունը կատարվում է Ոչ ժամանակի ընթացքում, ապա այն համարվում է կատարված ժամանակի որևէ պահին:

Ընկերության ժամանակի ընթացքում կատարվող պարտականությունները ներառում են.

- ✓ Հաշվապահական հաշվառման ծառայությունները, որոնց գծով հասույթը ճանաչվում է ամսեկան կտրվածքով;
- ✓ Խորհրդատվական բնույթի ծառայությունները, որը ունեն տարբերակելի ծառայությունների շարք, որն ըստ էության նույն է և գնորդին փոխանցվում է նույն սխեմայով:

Ընկերության ժամանակի որևէ պահի կատարվող պարտականությունները ներառում են.

- ✓ Աուդիտորական ծառայությունը, որտեղ հասույթը ճանաչվում է աուդիտորական եզրակացության տրամադրման ամսաթվով:

Արտարժութային գործարքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատույցներով փոխանցվում են երրորդ կողմին:
Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ընկերության ֆինանսական ակտիվները իրենցից ներկայացնում են ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների եւ ծառայությունների մատուցումից՝ առեւտրային դեբիտորական պարտքեր:
Դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեզրկման պահուստը:
Քանի որ դեբիտորական պարտքերի մարման ժամկետները փոքր են մեկ տարուց, ապա Ընկերությունը նրանց գծով զեղչում չի իրականացնում, զեղչման ազդեցությունը գնահատելով ոչ էական:
Առեւտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առեւտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետեւ, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առեւտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Զուտ արժեքով ներակայացվող առեւտրային դեբիտորական պարտքերի գծով, այդպիսի պահուստները հաշվառվում են առանձին հաշվով՝ ներառելով որպես իրացման ինքնարժեք համապարփակ արդյունքի հաշվետվությունում: Առեւտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձեւավորված պահուստի հաշվին:

Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և ցպահանջ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով: Մինչև մեկ տարի ժամկետ ունեցող առևտրային կրեդիտորական պարտքերը գծով Ընկերությունը զեղչում չի իրականացնում՝ զեղչման ազդեցությունը գնահատելով ոչ էական:

Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Վարձակալած ակտիվներ

Ընկերության վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով:
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սկզբնապես չափվում են վարձակալական պարտավորության չափով, հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները և գումարած հետևյալը.

- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվն ապամոնտաժելիս կամ քանդելիս:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալական պարտավորությունը աճում է մնացորդը վրա հաշվարկված տոկոսագումարների չափով և նվազում է վարձակալի կողմից կատարված վարձավճարների չափով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են իրավականորեն վճարման ենթակա ՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման գծով կորուստը:
Հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:
Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը ներկայացված է ստորև.

Սարքավորումներ	- 20% տարեկան գծային մեթոդով
Համակարգչային տեխնիկա	- 20% տարեկան գծային մեթոդով
Տրանսպորտային միջոցներ	- 10% տարեկան գծային մեթոդով